ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ

МЕРДЗАВАНСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք, Երևանյան
խճուղի 2-րդ փողոց 1,հեռախոս (0231)6-00-25
էլ.փոստgyuxmerdzavan@mail.ru

03.08.2012թ.
թիվ 122

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. Ս.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ի կատարումն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77[1]-րդ հոդվածի առաջին մասի, Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ղեկավարի 2012թվականի հուլիս ամսվա ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները :

Առդիր 6/վեց/ թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

1005-12
03 08 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐԾԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերծավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց1,հեռախոս (0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

30հուլիսի 2012թվականի N 7-Ա

ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ և 159-րդ հոդվածների 1-ին մասերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թվականի օգոստոսի 11-ի «Ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը,այդ արձակուրդի նվազագույն տևողությունը և տրամադրման կարգը սահմանելու մասին» N1384-Ն որոշումը, կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերծավանի գյուղական համայնքի ղեկավար Լևոն Գրիգորյանին համարել հերթական արձակուրդում՝ տրամադրելով 2012թվականի ամենամյա հերթական արձակուրդը, 2012թվականի օգոստոսի 7-ից մինչև սեպտեմբերի 7-ը ներառյալ՝ 24 աշխատանքային օր տևողությամբ /20 աշխատանքային օր՝ նվազագույն,4 աշխատանքային օր՝ լրացուցիչ /:
2. Աշխատանքի մեջ համարել 2012թվականի սեպտեմբերի 10-ին:
3. Լևոն Գրիգորյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում՝ նրա լիազորությունների իրականացումը վերապահել համայնքի ղեկավարի տեղակալ Արևհատ Եսայանին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012թվական հուլիսի 30
գ. Մերծավան

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց1,հեռախոս (0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

30 հուլիսի 2012թվականի N8-Ա

ՎԵՄԻՐ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածով և 159-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թվականի օգոստոսի 11-ի «Ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը,այդ արձակուրդի նվազագույն տևողությունը և տրամադրման կարգը սահմանելու մասին» N1384-Ն որոշումը, կարգադրում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքային ենթակայության «Կրթություն և մշակույթ» միացյալ տնօրինության տնօրեն Վեմիր Խուրշուդյանին 2012թվականի օգոստոսի 3-ից տրամադրել 2012թվականի ամենամյա հերթական արձակուրդը՝ 24 աշխատանքային օր տևողությամբ /20 աշխատանքային օր՝ նվազագույն,4 աշխատանքային օր՝ լրացուցիչ /:

2. Աշխատանքի մեջ համարել 2012թվականի սեպտեմբերի 6-ին:

3. Վեմիր Խուրշուդյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում նրա լիազորությունների իրականացումը վերապահել «Կրթություն և մշակույթ» միացյալ տնօրինության գեղմասվար Գոհար Սարգսյանին , չվճարելով աշխատավարձի տարբերությունը:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012թվական հուլիսի 30
գ. Մերձավան

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱՆՈՒՇ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՊԱՊՅԱՆԻ,ՈՌԲԵՐՏ ՈԱԶՄԻԿԻ ԲԵԳԼԱՐՅԱՆԻ ԵՎ ՌՈՒԲԵՆ ՈԱԶՄԻԿԻ ԲԵԳԼԱՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին , 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով ,Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1328-Ն որոշմամբ, հաշվի առնելով,որ հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ ենթակետերով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ սույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում և հիմք ընդունելով քաղաքացի Հրանուշ Համբարձումի Պապյանի դիմումն,որոշում եմ.

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի Այգեգործների փողոցի N38 հասցեում գտնվող ,մինչև 2001թվականին մայիսի 15-ը կառուցված, բնակելի տան և շենք-շինությունների զբաղեցրած հողամասի հողհատկացման հիմքերը 991,0քառակուսի մետր , հողամասի չափով, ճանաչելով քաղաքացիներ Հրանուշ Համբարձումի Պապյանի /ծնված 1937թ./,Ռոբերտ Ռազմիկի Բեգլարյանի /ծնված1960թ./ և Ռուբեն Ռազմիկի Բեգլարյանի /ծնված1965թ./ սեփականության իրավունքը ինքնակամ կառուցված բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ:

2.Աշխատակազմի քարտուղարին՝ `սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով `15-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան մարզային ստորաբաժանմանը ՝ գրանցելու քաղաքացիներ Հրանուշ Համբարձումի Պապյանի /ծնված 1937թ./,Ռոբերտ Ռազմիկի Բեգլարյանի /ծնված1960թ./ , Ռուբեն Ռազմիկի Բեգլարյանի /ծնված1965թ./ սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, բնակելի տան ու շենք-շինությունների նկատմամբ և տրամադրելու անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012թվականի հուլիսի 10

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐԾԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերծավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց1,հեռախոս (0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

20 հուլիսի 2012թվականի N 19-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱՆՈՒՇ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՊԱՊՅԱՆԻ,ՌՈԲԵՐՏ ՌԱԶՄԻԿԻ ԲԵԳԼԱՐՅԱՆԻ ԵՎ ՌՈՒԲԵՆ ՌԱԶՄԻԿԻ ԲԵԳԼԱՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին , 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով ,Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1328-Ն որոշմամբ, հաշվի առնելով,որ հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ ենթակետերով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ սույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում և հիմք ընդունելով քաղաքացի Հրանուշ Համբարձումի Պապյանի դիմումն,որոշում եմ.

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերծավանի գյուղական համայնքի Այգեգործների փողոցի N38/1 հասցեում գտնվող ,մինչև 2001թվականին մայիսի 15-ը կառուցված, բնակելի տան և շենք-շինությունների զբաղեցրած հողամասի հոդհատկացման հիմքերը 68,0քառակուսի մետր հողամասի չափով, ճանաչելով քաղաքացիներ Հրանուշ Համբարձումի Պապյանի /ծնված 1937թ./,Ռոբերտ Ռազմիկի Բեգլարյանի /ծնված1960թ./ և Ռուբեն Ռազմիկի Բեգլարյանի /ծնված1965թ./ սեփականության իրավունքը ինքնակամ կառուցված բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ:

2.Աշխատակազմի քարտուղարին՝ `սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով `15-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան մարզային ստորաբաժանմանը ՝ գրանցելու քաղաքացիներ Հրանուշ Համբարձումի Պապյանի /ծնված 1937թ./,Ռոբերտ Ռազմիկի Բեգլարյանի /ծնված1960թ./ , Ռուբեն Ռազմիկի Բեգլարյանի /ծնված1965թ./ սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, բնակելի տան ու շենք-շինությունների նկատմամբ և տրամադրելու անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2012թվականի հուլիսի 20
գ. Մերծավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց1,հեռախոս (0231)6-00-26
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

24 հուլիսի 2012թվականի N 20

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ՀԱԿՏԱԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, որոշում եմ.

1.2012թվականի սեպտեմբերի 9-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցող թեկնածուների և կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) քարոզչական պաստառները փակցնելու համար Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) Երևանյան խճուղու N15, N17, N53, N57, N59, N61, N63, N65 բազմաբնակարան շենքերի պատերին՝ տրամադրված 3-4 քառակուսի մակերեսների վրա:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
2012թվական հուլիսի 24
գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց1,հեռախոս (0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ
24 հուլիսի 2012թվականի N 21

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով,16-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, որոշում եմ.

1.2012թվականի սեպտեմբերի 9-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին անցկացման համար՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքում սահմանել ընտրական երկու տեղամասային կենտրոն՝

1)Առաջին ընտրական տեղամասային կենտրոն սահմանել մանկապարտեզի շենքը՝հասցեն Երևանյան խճուղի 2-րդ փողոց N3: Տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող համարել «Մերձավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ տնօրեն Գայանե Սարգսյանին:

2) Երկրորդ ընտրական տեղամասային կենտրոն սահմանել մշակույթի տան շենքը՝ հասցեն Երիտասարդության փողոց N39: Տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող համարել «Կրթություն և մշակույթ» միացյալ տնօրինության տնօրեն Վեմիր Խուրշուդյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
2012թվական հուլիսի 24
գ. Մերձավան